ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: 58 02 42 , Ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan,
secretariat@escs.am,www.escs.am

N-08.1/23436 01 09 2020թ.

«Իրտիգ» ՍՊԸ-ի տնօրեն
Տ.Պողոսյանին

Հարգելի պարոն Պողոսյան,

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Իրտիգ» ՍՊԸ-ի միջև տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետը, 09.07.2020թ կնքվել է N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/92 ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո Ձեզ 06.08.2020թ ներկայացվել է կնքված Պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր կնքելու առաջարկ, որը ըստ Պայմանագրի 7.13 կետի կարող էր կնքվել, եթե տուժանքի ձևով ներկայացված որակավորման ապահովումը սահմանված ժամկետում (մինչև 27.08.2020թ ներառյալ) փոխարինվեր նոր ապահովմամբ՝ բանկային երաշխիքի ձևով: Սակայն մինչև սահմանված ժամկետի ավարտը որակի ապահովումը բանկային երաշխիքով փոխարինվել է մասնակի:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 7.13 կետը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը միակողմանի լուծում է Ձեզ հետ 09.07.2020թ կնքված թիվ N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/92 գնման պայմանագիրը:

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝ ՎԱՀՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Կատ. ՀՀԿԳՄՍՆ գնումների և հաշվապահական հաշվառման վարչության գնումների կազմակերպման բաժին, Նանե Կարապետյան
հեռ. 010599656, 099-71-71-78